

թիւ 28428  
Գեկտեմբեր 2, 1988

Ազնուախայլ  
Տիկին Արաքս Բարան  
Թորոնթօ.

Ազնիւ Տիկին Բարան,

Ինչպէս հետաձայնային մեր խօսակցութեան ընթացքին ձեզի յայտնեցինք՝ որոշած ենք Ս. Ծննդեան առթիւ, Յունուար 6, 1984, Թորոնթոյի մէջ Ս. Գառարագ մատուցանել եւ Հայ աշակերտներու համար ԵԸՆԴԵԱՆ ՀԱՄԱԸՈՅԹ մը կազմակերպել:

Այս հաւաքոյթի կազմակերպչական աշխատանքներու պատասխանատուութիւնը վստահած ենք ձեզի:

Մեր այս նշանակումը յայտնած ենք Թորոնթոյի Ս. Նրորդուլթիւն Եկեղեցւոյ յիսկան Խորհուրդի Ատնապետին, եւ թելադրած որ ձեզի հետ հանդիպում մը կարգադրէ հաւաքոյթի մանրամասնութիւնները յստակելու նպատակով:

Որպէս Ծննդեան Հաւաքոյթի գլխաւոր պատասխանատու ձեր պարտականութիւնը պիտի ըլլայ՝


— կազմել Յանձնախումբ մը, որուն անդամներուն անունները պիտի տեղեկացուին ձեզի առ ի գիտութիւն.

— Հրաւեր ուղղել Թորոնթոյի եւ շրջակայքի բոլոր Հայ աշակերտներուն անխտիր՝ ապահովելով անոնց անուններն ու հասցէները --հրաւիրագիրները պիտի յանձնուին ձեզի--.

— Աշակերտներու նախամաշի պատրաստութիւնը սեփնել --աշակերտները Գառարագի ընթացքին Ս. Հատորութիւն պիտի ստանան-- , եւ հսկել կանոնաւոր սպասարկութեան.

- Պատշաճ յայտագիր մը պատրաստել.
  - ``Կադանկ Պատան`` ապահովել.
  - ``Կադանկ Պատանի`` կողմէ արուելիք նուէրները ապահովել եւ ծրարել.
  - Սրահը կամ բեմը զարդարել տօնականօրէն.
  - Սրահին մէջ մասնաւոր սեղան մը պատրաստել հիւրերու համար.
  - Սկեղեցւոյ եւ սրահին մէջ աշակերտներու կարգապահութեան հսկել:
- Եննդեան Հաւաքոյթի համար եղած ծախքերը մեր կողմէ վիտի Գոզաց-  
ւին՝ համաձայն ներկայացուած հաշուեցոյցներուն:
- Ուրախ ենք որ չմերժեցիք մեր առաջարկը եւ սիրով ստանձնեցիք ձե-  
զի վստահուած պարտականութիւնը:
- Ձեզի եւ ձեր զործակիցներուն կը մաղթենք քաջատողշութիւն եւ յա-  
ջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

  
ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ